

եղեւ գլխաւորացն այլազգեաց զգուշանալ քաղաքին, եւ թողին զերկոսեանն բաց՝ կարգեալ 'ի նոսա զինեալ պահապանս, չընդունել զոք յարտաքուստ 'ի ներքս, թէ եւ կարի յերեւելեաց անտի իցէ՝ եւ եթէ ոք յանդգնեացի բռնութեամբ մտանել՝ գլխատել զնա, յորմէ արգելան ուխտաւորք քրիստոնէից, ընդ որս եւ սպասաւոր Անտօն աղայի՝ որ եկեալ էր վասն հարկաւոր իրիք գործոյ, եւ այս եւս 'ի վնաս վանականաց :

Եւ 'ի այն առաւրս երեւեցաւ յերուսաղէմ նշան ժանտամահ հիւանդութեան, որ եւ ոմանք ըմբռնեալ 'ի նոյն մեռան, (Փետրվար 30) :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Ընտրութիւն Թէոդորոսի ։ Շփոթութիւն Բդէշխից ։ Պաշարումն Յոգպէի՝ եւ պատերազմ ։ Վէճ Լատինաց ։ Կիրակոս Կաթուղիկոս Սոյ .
Վէճ Յունաց 'ի Ս . Աստուածածին ։

Ի ԿԻՆԵԼ ազգային ժողովոյ 'ի Կոստանդինուպօլիս (1802 . Փետրվար) վասն ընտրութեան Պատրիարքին Երուսաղէմի, յետ բաղմադիմի բանից եւ վիճմանց, հաճութեամբ բազմաց վերստին ընտրեցաւ Թէոդորոս եպիսկոպոս Վանցի . առ որ յառաջագոյն գրեալ էր Յակոբ եպիսկոպոս յանձն առնուլ զպաշտօնն զայն . եւ յետ այնորիկ գրեցաւ գիր 'ի գիրմաց ժողովոյն, գրեցին նաեւ ոմանք յերեւելեաց ազգին առանձին, ընդ որս եւ Յակոբ եպիսկոպոս հարկեցուցիչ բանիւ, յորդորելով զնա յարգել եւ մեծարել զընտրութեան պատիւն եւ զկամս ազգին ։ Զայսորիկ գրեանս բերին յերուսաղէմ Պետրոս եպիսկոպոս եւ Կարապետ վարդապետ յաւուր Աւագ հինգշարթի ('ի 10 Ապրիլի) ։ Ընթերցեալ Թէոդորոսի զգրեանս եւ զմտաւ ածեալ զծանրութիւն զանխուսաբելի լծոյն, յօժարեցաւ հնազանդիլ կամաց ազգին, եւ յանձն առ նստիլ յԱթոռն եւ վարել զԷջմանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի,